

Թերթը կը դրկուի կանխիկ վճարողներու միայն:

ԱՍԺՆԵԳԻ

ՊԵՏԱՆԶ

Գրութիւնք հա-
շին տրուիր:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE



ՇԱՐԱԹԱՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, АДВОКАТЪ.

2. ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ 6 ՇԱՐԱԹ 1902

ԹԻԻ 246

Այսօր կ'աւարտի Մարգարիսնէրու Գեորգի, զոր
անշափ ախորժով կարգացին մեր ընթերցողնե-
րը: Զատկէն վերջ պիտի սկսինք հրատարակել

ԴԱՏԱԻՈՐԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ

անուն արկածալից, խիստ հետաքրքրաշարժ և
բարոյալից վէպ մը, հաւատարմ ըլլալով որ այս ալ
միևնոյն ախորժով պիտի կարգացուի:

Բարից հրատարակւած պրօշուրէ մը կը քա-
ղենք հետեւեալը, որ Պ. Արշակ Զօպանեանի
փառքը կ'անմահացնէ:

«ԺՈՂՈՎՈՐԳԸ ԹՈՂ ԴԱՏԷ»

«Ժողովուրդին համար» խմբագրութեան գէ-
ղած մատնութիւնը Անտիփի խմբագրին կողմէ,
որ սկիզբէն ի վեր ճիշդ մը կ'ընէր, — և յաշտե-
ցաւ ալ, — իր թերթին բոլոր էջերը մրտոեղա-
տաւերով ու խարդախ փոխառութիւններով, անձ-
նագովութիւններով ու պժգալի հայհոյութիւն-
ներով, առիթ կուտայ ինծի հրապարակ հանել
վիճաբանութիւն մը, որ տեղի ունեցած է Մ.
Պապաստարեանի տպագրանին մէջ, և որ բաւական
լայկը սփռէ ինքզինքը Արշակեանի թագաւոր-
ներու ձեռքէն սեռած համարոյ և այս ուռուցիկ
տիպոսով հայասէր ֆրանսացի մը (Վ. Պ.) խա-
բելով 600 ֆրանք շորթօղ բռնի Արշակ Զօ-
պանեանի ծածուկ գործերուն վրայ:

Վիճաբանութեան նվթիւ էր Անտիփի ցա-
ւաղար, գրաչարին (որուն օգնութեան ապաստա-
նած է հ մալ Ա. Զօպանեան առաւ պախչիչներ
տալով), մէկ անգագտնապահութիւնը, զոր չա-
կերաններով մէջ բերած է իր բաժնունին խոր-
հուրդովը և և գոժակցութեամբը գրած պրօշու-
րին մէջն ալ այսպէս, բառ առ բառ:

«Պ. Զօպանեանի բացակայութեան, անոր դու-
ռը բանալով, անոր տունը մտած, անոր թղթե-
րը խառնած, տնտած ու բանալով կարգացած եմ
իր Ռուսիոյ Հանրայն Կրթութեան նախարարին
զրկած մատնէջական մէկ նամակը, որուն մէջ
Պ. Զօպանեան խոտացած կրկնալի նպատակ Ռու-
սիոյ քաղաքականութեան դարձել է թէ թող տրուի
Անտիփի մտաբեր»:

Հոն յերկայ էին Մ. Պապաստարեան (Համալսա-
րանի խմբ.) և իր գրաչարը Մ. Միհրդատեանց
և Գ. Մեծատուրեան (Գորքանի խմբ.) ճիշդ չորս
հոգի: Վիճաբանութեան միջոցին Գորքանի խմբ-
բաղիրը սա բաւերը արտասանեց. «Զօպանեանի
գրաչարը իրօք աչն սեռակ նամակ ընդհանր
ՅՈՒՅ և ես ապշած մնացի»:

ՄԱՐԳԱՐԻ ՄԵԼԵՏՈՍԵԱՆ

Երեսուցէմէն կը գրեն թէ ուխտաւորներու
թիւը միևնոյն հիմա 700ի հասեր է:

— Վեհափառ Կաթողիկոսը 10 օամ: ոսկի զըր-
կեր է Պատրիարքարան, Մշոյ մէջ Սահակ Հայ-
րապետի մատարան նորոգութեան համար:

— Ի նպատակարար երկրաշարժէն ա կած-
եալներուն, մինչև հիմա Պատրիարքարան հա-
սած գումարներուն ամբողջութիւնն է 2500 ոսկի:

— Էջմիածնայ «Արարատ» ամսագիրին խմբագրութիւնը փոխուած է. անոր երկու աշխարհական հմուտներու յանձնումովը, Ճեմարանի ուսուցիչ եկեղեցական իրաւաբան Պ. Ս. Տիգրանեանի, գերմանաբան, յունաբան և փիլիսոփայութեան պատմաբան Պ. Յ. Մանգինեանի: Իսկ Պ. Հրաչեայ Աճառեան՝ սրբադրիչ պիտի ըլլայ: Այս ամսագիրը մինչև հիմա ձրի կը խմբագրուէր թէև բայց հիմա նոր խմբագրութեան կը վճարուի տարեկան 300 ռուպլի: Բայց կըսուի թէ գլխաւոր աշխատակիցը 1200 ռուպլի կը պահանջէ. աշխատակիցներ վարձատրելու համար: Ս. Հայրապետը պահանջուած գումարին կէսը վճարելու հաւանութիւն յայտնէր է:

— «Յօգուտ հայ բանտարկեալներու և աքորեալներու» Կարմիր Խաչ վերնագրով շրջաբերութեան հանուած վիճակահանութեան տոմսերուն իւրաքանչիւր 25 հատը տետրակ մը կարուած՝ անոր ետեւը Առետըական պաշտօնէութեան կողմէ կնքուած է. թէեւ րոտ օրինի պէտք է եղեր տոմսակներուն ամենքն ալ կնքել:

— «Մեզ կիմացնեն թէ անցեալ շաբթու Լոնտրայէ Բարիկ եկեր են Անկլո-Հայկական միութեան անդամներն մի քանիներ և ճաշի հրաւիրեր են Բարիկաբնակ հայերէն մէկ քանին: Երկու օր յետոյ հայերն ալ, քաղաքապետութեան համար անգլիացիները ճաշի հրաւիրած են: Աս հացկերոյթին ժամանակ «կենաց»ներ առաջարկուած և փոքրիկ ճառեր խօսուած են: Ներկոյ գոնուող հայերէն մէկն ալ ուզեր է ճառ մը արտասանել, և անգլիացի հիւրերու առջև Անգլիան վարչարարելու և Հայկական խնդրոյ առթիւ անոր քաղաքականութիւնը քննադատելու և նախատելու. քաղութիւնը ունեցած է: Սակայն ինքն ալ քանի մը հեռատես և հիւրասիրութեան յարգը ճանչցող Հայերու կշտամբանաց արժանացեր է:

Մ. Ս. Դաւիթբեկ

— Բազմապիւններու Պաշտասար թագաւորն պաշտոնը գտնուեր է վերջերս Պաշտասար մօտերը Գերմանական հնագիտական ընկերութեան մը կողմէ: Այս պաշտոն այն է որ Պաշտասար կեր-

տ խումբի զբաղած էր իր պաշտասարաններուն հետ մինչ անցին Կիւրոս պաշտած էր Բաբելոնը, ինչպէս Աստուածաշունչ, մէջ կը պատմուի:

«ՈՐՈՎՀԵՏԵԻ ԲԱԺԱՆՈՐԳ ԵՆ»

Պարէշի մէջ կան մէկ քանի պարոններ որոնք հետեւեալ պայմաններով կ'ուզեն բաժանորդ գրուիլ արտասահմանեան հայաթերթի մը.

Ա. Թերթը պարտաւոր է մինչև վերջը իր սիւնակները այդ պարոններուն տրամագրութեան տակ գնել, «որովհետեւ անոր բաժանորդ են»:

Բ. — Եթէ իրենց մէկ յօդուածը հրատարակուի՝ անոր տ. ուրիշ պատասխանը չեն ուզեր որ ըստ օրինի և անկողմնակալութեամբ հիւրընկալուի միւսնոյն թերթին մէջ, «որովհետեւ բաժանորդ են»:

Գ. Կուզեն որ այն ինչ անձը իր իսկական անունով ու մականունովը իբր խաչագող հրատարակէ խմբագրութիւնը իր կողմէ, (որուն համար մութ է այդ կէտը, և որուն յանձնուած չէ պէտք եղած օրինաւոր փառսերը) և կամ կ'ուզեն որ միւսին կեղծ ստորագրութեամբ գրուած ու զրկուած յօդուածով մը այդ մարդը ամբաստանեն, որպէս զի երբ ամբաստանեալը բողոքէ, իրենք օձիքնին աղատեն, ուրանալով այդ կեղծ ստորագրութեան տէրը ըլլալին, և հոգ չընելով խմբագիրին վրայ պատասխանատուութիւն հրաւիրելին, «որովհետեւ բաժանորդ են»:

Դ. — Որովհետեւ ատանկ ֆէյքթիւր բաժանորդներ մեզի պէտքը չեն:

ԻՆՉ Է ԱՊՐԻԼ ՄԵԿԸ

Ապրիլ մէկը հրնոյց ի վեր միամիտներու հետ իշնալու և այլ և այլ կատակաբանութիւններ ընելու սահմանուած օր մը համարուած է:

Գերմանիոյ մէջ առակ եղած է ըսել թէ՝ «Ապրիլ մէկի միամիտը ուր որ ուղիս կրնաս զրկել»: Եւ այսպէս, եթէ մէկը զեղարան մը կամ օր և է վաճառատուն մը երթայ խեցգետինի տրիւն, ճանճի ճարպ, կայծքարի ձեթ, վարդականաչ մելան, եռացեալ ձիւն կամ հիւսուած աւաղ, իշու հաւկիթ կամ թիթեռնիկի

միս հարցնելու՝ իբրեւ ապրիլի միամիտ կ'ողջնենուի։ Այսպէս է նաեւ Շուէտի, Տանիմարքայի եւ Անգլիոյ մէջ։ Անգլիացիները «Բոլոր միամիտներուն օրը կ'անուանեն ապրիլ մէկը»։ «Ապրիլի միամիտ» կը կոչեն զայն որ կը խաբուի։ Իսկ հիւսիսային Անգլիոյ մէջ խաբուողին կըրնակը բան մը կը կախեն կամ յանկարծ առանց իմացնելու երեսը կը սեղնեն։

Մարդ խաբելու այս սովորութիւնը կայ բոլոր եւրոպական երկիրներու մէջ, ինչպէս մեր մէջ ալ, բացի Սպանիան ու Բորթուկալը։ Քրանսացիք այս սովորութիւնը «Միականի պատգամաւորութիւն» կը կոչեն, Իտալացիք՝ «Քաղէնարինոյ խաղ», Պօքքալէօ բանաստեղծին (1375) ժամանակը ծանօթ միամիտ ուստայնակի մը անունէն անուանած։ Քրանսայի, Պելճիքայի եւ Իտալիոյ մէջ, մարդ խաբելուն կըսեն նաեւ «Մէկուն ապրիլի ձուկ պարգեւել»։ Ապրիլի ձուկ լսուածը թիւնիւն է (խսկոմնի), որ այս ամսու սկիզբները երեւան կուգայ մանաւանդ Քրանսական ծովեզերքներուն վրայ։

Թէ ապրիլ մէկին մարդ խաբելու սովորութիւնը ո՛ւնկից առաջ եկած է զանազան կարծիքներ կան այս մասին։ Ոմանք Հսկովայեցեացի Վոլիքիտեան տօներէն առաջ եկած կը համարեն, ոմանք կը մեկնեն թէ Ապրիլի անհաստատ եւ խաբոյ օրերը խորհրդանշող սովորութիւն մը պէտք է նկատել Ապրիլ մէկի օրուանը։ Քրանսացիք ալ ասոր ծագումը պատմական դէպքի մը կը վերագրեն Լուդովիկոս ԺԳ-ի ժամանակէն։

Իսկ հեթանոսական ժամանակներէ մնացած Ժողովրդական զրոյցներու մէջ՝ Ապրիլ 1ը աւելորդապաշտութեան երեւակայած շարագուշակ օրերէն մէկը համարուած է, որովհետեւ ոչ միայն շարթուան ալլելու ամսուան զանազան օրերը այս կամ այն պատճառաւ բարեգուշակ կամ շարագուշակ կը համարուէին, կը գրէ Ռայնսպէրի իր «Տօնական տարի» անուն գրքին մէջ, ինչպէս Ապրիլ 1ին՝ օրպէս թէ Յուլիան ծներ է, Օգոստ. 1ին՝ Սատանան գժոխքին դատապարտուեր է, և Դեկտ. 1ին՝ Սոգոմ Գոմորը բնաջինջ եղեր է։ (Հ. Ա.)

ՀԱԼԱԾԱԿԱՆՔ



Լ. Ս. (Առջևէն փախչելով) — Նախակը դուն գրեցիր։

Վ. Շ. (Զայն հալածելով) — Բայց ինչու երեւան հանեցիր, դուրս, դուրս կորի՛ր։ Հուգուգ. (Նոյնպէս) — Այո՛, դուրս, ~~մատնիչը~~ մատնիչը դուրս։

Ե. Խ. (Նոյնպէս) — Էյ, դուն ալ դուրս, աղգուրացդ ալ դուրս...

ԱՊՐԻԼ ՄԵԿ

Տեսարանն է սրճարանի մը մէջ .

Նորեկ մը . — Միտիւ Բարթիկ, հիմա եկած ատենս ճախուն միտիւ Գաթիկը տեսայ, ամենա-կարեւոր գործի մը պատճառաւ . հետք կուգէ ե-ղեր տեսնուիլ, ուստի ժամանակ չի կորսնցնելով ելլ, գնա :

— Հըմ . . . ինքզինքդ խաբէ պարտն . այ-սօր ապրիլին մէկն է :

— Ահ, հաւատացիր թէ մտքէս անգամ չան-ցաւ ատիկա, կը վստահեցնեմ որ զրեզ խաբե-լու մտքով չէ ըսածս :

— Վրաս գրէ, Սեփոն, չես կրնար զս հա-մոզել . գործը յայտնի չընելու համար լուրջ կերպարանք մը առած . «կը վստահեցնեմ», «հա-ւատացիր խօսքիս» ըսելներէդ չեմ խաբարի ու առտուանցով՝ անօթի փորանց՝ երեք քառորդ ժամ ճախայ չեմ կրնար եղեր ելլալ :

— Կեցիր, գրաւի մը մտնենք, եթէ զքեզ խաբած ըլլամ, սա երկու ֆրանքները զոր պի-տի յանձնեմ սրճարանապետ Պ. Զարեհին, քե-զի կը նուիրեմ, կընդունիս :

— Ադ ուրիշ խնդիր . կընդունիմ :

Ու առաջարկողը՝ գրպանէն երկու ֆրանք հանելով թուղթի մը մէջ ծրարելէ վերջ պա-րոն Զարեհին կը յանձնէ :

Բա թիկ . — Հիմա պարտն Զարեհ . յըջօրն կըսեմ քեզի որ եթէ մինչեւ երկուրդ թափարի ֆապրիգան պարտայ տեղը գացած ըլլամ, այ-սինքն եթէ գրաւը չահիմ, զայն ինձ պիտի յանձնես առանց ու եւ առարկութեան, հակա-ռակ պարտգային կերպնամ թէ անգամ մ'ալ քո սրճարանդ ոտք չպիտի դնեմ, որով թէ բա-րեկամ մը եւ թէ՛ յաճախորդ մը կորսնցուցած պիտի ըլլաս :

Զարեհ . — Վստահ եղիր բարեկամս, որ եթէ չահիմ այս ծրարիկը քեզի պիտի յանձնեմ :

Առաջարկողը . — Կեցիր, միտիւ Բարթիկ, առելի տպանով ըլլալու համար քու աչքիդ առ-ջեւ երկու ֆրանքը Պ. Զարեհի յեփնեմէն մէջը դնելով կը կրպնք ու բանալին դուն վրագ կառնես :

Բարթիկ . — Շատ աղէկ, այն ատեն բոլո-րովին կը վստահիմ :

Այս որոշումէն վերջ միտիւ Բարթիկ Մու-սալայէն ճախայ կելլէ եւ երկուրդ թափար հա-նելով հոն կը գտնէ իր մտերիմ միտիւ Գա-թիկը :

— Բարեւ բարեկամս :

— Աստուծոյ բարին .

— Ստիպողական գործի մը համար զիս ու-զեր ես եղեր, ահա եկայ :

— Ներհեցէք, ո՞վ ըսաւ ատիկա :

— Սէփոն խոսքիս հանցը :

— Հա՛հ, հա՛հ, հա՛հ, խաբարդ չի մնայ ա-մա, բաւական ազուշ ես եղեր որ այսչափ ճամ-բան եկեր ես, մեզք որ խոռոնաց եմ կըսես . չը յիշեցիր թէ այսօր ապրիլին մէկն է :

— Ապրիլին մէկը մի, ուրեմն գրաւս չահե-ցայ, ըսելով առանց մնաս բարովի շունչը Պ. Զարեհի սրճարանը կառնէ, արիւն քրտինք մը-տած :

— Է, պարտն Զարեհ, գրաւը չահեցայ, եր-կու ֆրանքը իմն է : Ու զվարճը բանալով ծրա-րիկը կը յախշտակէ, բայց բերանը բաց կը մը-նայ, տեսնելով որ այն երկու ֆրանքները Պոն-մարշէի վաճառատունը ծախուած կեղծ ֆրանք-ներ էին, ու թուղթին մէջտեղն ալ սապէս գրը-տած էր . «Ապրիլ 1ի ֆրանքներ» :

Նոյն օրը Թիֆլին Թարթիպ ալ իր գրագիրն կըսէ :

— Հոռոմի տուտու, կ'լիսդ շալ մը առ տէ հասիր, նեմզուրը ցաւ կը քաշէ կոր եղեր :

— Քա ի՞նչ կըսէ . . . վայնի վրան . . . է՛յ կերթամ, կերթամ, քա ուրիշէ իմացար :

— Աստուծոյ ժամը ճաշուի գացեր էի, խաբը-չըխենց էֆտիկը ըսաւ :

— Հասկցայ, անոնց քովը տունը կը նստին եւ, Ամա ըսին քի բէք եկեր հասեր է տէյի, աճապա որ տահեկը պերին, (Աղջկանը) քա Ա-ղանի, դուն տօրման վրան դիր, տէ առա սըրա պատ պուտ ճուր վախցար, իսկ է . էրթամ մահման տահաթին կէնճին քովը կտնուիմ, ճա-հա երբ էր տէմս էլաւ, հարցուցի նէ ութնին մէջն եմ, ըսաւ, չելլայ կէնճը խաղայի մը կայ :

— Աման մարիկ, ամեն պահին ալ մէջ կը նկատուի :

— Քա, վրայիդ ֆարզ չէ ատիկա, թքանոց դուն ալ, բէյազին սօխն ալ ըստկած եմ, կուզես նէ նօհուտն ալ էղմէ :

Այս ըսելէ ետքը Հոռոմի տուտուն որ Բ. թաղը կը բնակէր, գէպի Գաաըը պապալի թա-ղը ճամբայ ելաւ, եւ նէմզուր տուտունն տանը առջեւ անոր տղան Երուանդը տեսաւ :

— Մօ Երուանդ, մայրիկդ ինտո՞ր է :

— Մայրիկս առ առտու հաց կտրեղնիքէն մա-տը կտրեց տէ վրան էօրիմճէք գրեր նստեր է :

—Նախըլ էօրիւմէք ծօ ցնդած . կէնճը ան-
դին պէտքէլի օվան օվան կուգայ կոր . ինծի
կայնեւր մատի ցաւ է կըսես :

Ու ածապարանօք տունէն ներս մտաւ :

Նէմզուրին տալը — Քա վույ, Հոռոփ հանը-
մըն է . էյ բարի եկար . խէր է ինչալլահ . ա-
սանկ կանուխ հավան աղւոր տեսար նէ գուրս ին-
կար :

—Քա ի՞նչ հալա . ի՞նչ դուրս իյնալ .
էյ նախըլ . ազատեցաւ պարէ :

—Քա ո՞վ, ի՞նչ :

—Մեղայ . հարսդ իշխէ :

—Հա՛ հա՛ հա՛ խուռնալ եմ կըսես ամա
կէնէ մէկ թարաֆդ պօշ է :

—Վա՛յ էրկու աշվընիդ չի քէօռնայ . վախ-
նամ օյին ըրիք :

—Քա Ապրիլին մէկը չէ՞ ասօր . ինտօ՞ր ալ
կըլլեցիր :

—էյ աս օյին է . . . առտուանցով խօճա
կնիկ պորտո դուրս ձգեցիր . . .

—Զարար չունի . եկուր աղւոր խահուալթը
մը ընենք քի պորտդ տեղը կայ . ըսելով կրակա-
րանին շուրջը բոլորեցան և սկսան քաղուածք
ընել ըստ սովորութեան իրենց բամբասաղիքը :

* * *

—Բարե Մելիքոն աղա :

—Վա՛յ բարիդ շատնայ էֆէնտըմ :

—Քեզի բարի լուր մը տալու եկայ :

—Աստուած կեանք տայ աղայիս . հիւրիւմ-
մեցէք :

—Սա ո՞ւր է դուք 50 ֆրանք կը պահան-
ջէիք մահուտ շուքի կոմիտասէն :

—Պէլի էֆէնտըմ, ճիտը տալը մնայ :

—Իմացայ որ ատիկա 200 ֆրանքի պահանջ
մը ունի եղեր Ալախում—Սալախում անուն վաճա-
ռականէն ու այօր այդ դրամը պիտի գանձէ .
եթէ դուն քու մտերիմիդ վաճառական Մինաս
աղային դիմես . անիկա որ Ալախում—Սալախումին
ալ խիստ մտերիմն է . կրնայ միջամտել տալ և
բանի մը յարմարցնել քու առնելիքդ . որովհե-
տե շուքին այդ Ալախում—Սալախումին հիշ մէկ
խօսքը չկրնար եղեր կոտրել :

—Ամա՛ մուշու պէկ . էկէր մէպլուղը մէզ-
քիւրը մա ֆախի ու կիւղէլթէ քու սայէէդ աս
թէրթիպով ան կատու կաթնավերին զիմմէթէն
թահսիլ անելու զատիր ըլլանք իսէ . կենդանի

աղօթքը բարեխօս . օղորմած հոգի տէտէիս գե-
րեզմանը վկայ ըլլի ուր՝ 15 ֆրանքը աստծա
ահպապճա զիյաֆէթի մի թախսիս տի անիմ .
պայվական խուզի բիւլվիով . եօղուրտով ու մա-
ծունով ճիւմպիւշ մի տի անինք :

—Հարիւրին իննսունը ինը կը յուսամ թէ
պիտի յաջուիս . միայն կը վախնամ որ ֆայիզի
կիւղէլթէի խնդիր հանելով գործը կը դժուարա-
նայ . էն առաջ նայելու ենք 50 ֆրանքը աղատել :

—Շիտուակ է . կէօղլուկիդ տակի աչքիդ
պլպլուքը սիրիմ ուր՝ զայտէլի կու խօրաթիս .
կաթնավերէն անա բարան թահսիլ անենք տը՝
ֆայիզն ալ պաշխասիու մը կռնակէն կու հանինք :

—Ատիկա ձեր գիտնալիք բանն է :

—Աստուած պետականութիւնը օրերնիդ հազար
անէ . հըմայեկս մէյմէկ տուպէ չայ խմինք տէ՛
պատէհու Մինաս աղայիս միւրաճաթ կանիմ :

Ու թէյերը խմուելէ ետքը մեր Մելիքոն ա-
ղան չափազանց ուրախութեամբ կը գիմէ Մինաս
աղային որ կը յայտարարէ թէ այն միջոցին կամ
այն օրը չկրնար Ալախում—Սալախում վաճառակա-
նին դիմել . որովհետեւ ձեռքը ամենակարեւոր
գործ մը ունի . բայց եթէ կուղէ՝ կրնայ վաճա-
ռական Բամիկ աղային դիմել որ նոյն գէս վերո-
յիշեալ վաճառականին բարեկամն ըլլալով . կրնայ
բանի մը յարմարցնել : Ասոր վրայ Մելիքոն ա-
ղայն շունչը Բամիկ աղային մաղաղան կռնէ .
ուր իմանալով որ սքսսիոն գացած է . հսի կը
վաղէ . բայց հոն ալ չգտնելով . կը վերադառնայ
և վաճառատունը կը սպասէ : Կէս ժամ վերջը
Բամիկ սղան հրագայ և գործը հասկնալով . կը
խոտանայ մէկ ժամէն երթալ նոյն վաճա-
ռականը տեսնել : Մելիքոն աղան չափազանց
յոյնած խանութ վերադառնալով . ակտուի մը
վրայ կիյնայ :

Միւսիւ Գառնիկ՝ որ դիմացի սրճարանը նըս-
տած անոր վերադարձին կը սպասէր . անմիջապէս
կը մօտենայ :

—Կերնի թէ շատ յոգնեցաք :

—Յոգնեցարն ալ խօսք է մի եւա . կաթնա-
վերին սէպէպով աղիին ասդին վաղելուս հարարէ-
թէն բերնիս էրքեան մինտէրին թիզ մի գուրս
ինկաւ :

—Է . ի՞նչ ըրիր նայինք . յաջողեցար :

—Էֆէնտըմ, Մինաս աղան գործ ունէր . ա-
նոր թալօրիշտովը թիւճճարը միւթէպէրանտէն
Պալճի զատէ Բամիկ աղանիս խօսք տուաւ . ուր՝
քիչ մը ետքը տի երթալ ատ Ալախում—Սալախում
թիւճճարը տի տեսնէ ու մատտէն հասկցնէ :

—Ի՞նչ կըսես կոր Մելիքոն աղա . անանկ քիչ
մը ետքը ըսելով ժամանակ կորսնցնել չըլլար :

հիմա չուճին Ալախում-Սալախումին վաճառատու-
նը մտաւ . դրամները պիտի առնէ . հետեւաբար
Բամիկ աղային ժամ մը վերջը երթալը կուտ մը
չպիտի րնէ :

—Աման պէկս, չարէ մի անինք, սա կաթ-
նավերին զիմէթէն փարանիս խալտինք :

—Կեցիր . վերի շուկան քու և մեր բարե-
կամ սեղանաւոր Գրաբոս աղան ալ այդ վաճա-
ռականին բարեկամն է . եթէ անոր երթաս իմա-
ցնես . . .

—Վայ պէկս, խելքիդ տէօշէմէն սիրիմ ուր
մէջը տէրեա ախըլ կու վախտայ . հրմայեկս հէ-
մէն կը թռիմ ու անոր միւրաճաթ կանիմ . . . Ը-
սելով կը վազէ կերթայ նոյն սեղանաւորին խա-
նութը . սակայն յիշալը հասկցած էր թէ խաղ
մըն էր որ կընէին Միլիքոն աղային , ուստի ,—
եկուր նստէ , քիչ մը յոգնութիւն ա՛ւ , առ ո՞ր-
չափ քրտնէր ես , կըսէ :

—Քրտնելն ալ խօսք է մի , է՛յ ճիկէրիս քո-
չէն , թա՛մ էրկու սահաթ է ուր չուհա մէքիւ-
կիի պէս տիւքեան տիւքան կու ցատկիմ , սա պու-
լաշըի մատէն թէմզցնելու ըհմար . զէրէ մալիմ
ա՛ , մալ ճանըն եօնկասը տըր :

—Ճանըմ նստէ քիչ մը :

—Աման Գրաբոս աղա , ադ նստելն ու կէօ-
րիւմէն վազթը ախէրին ձգելով , քէրէմ ու
հիմմէթ արէք սա թիւճճարին միւրաճաթ ա-
նինք . կատու շանտուղան փարաներուն սահապ
կրլի վէ մեր հախսն ալ «բազիւմ աշխատե-
ցանք և . . . հապտմ կալանք» կըլլի :

—Բայց ո՛ւր պիտի երթանք :

—Պինտ էռաջ ըսինք ա՛ էֆէնտըմ . թիւճ-
ճարը միւթէպէրանտէն Ալախում-Սալախումին մա-
ղաղան :

—Ազէկ ամա , մենք ադ մարդը չենք ճանչ-
նար :

—Ի՛շ կըսիք աղա , հէմչէրիութեան խաթը-
րին համար առ թէքլիֆնիս խապուլ արէք :

—Բայց քանի որ մինչև ցարդ այդ վաճա-
ռականին հետ ո ե է յարաբերութիւն մը ունե-
ցած չենք , ի՞նչպէս իրեն դիմենք :


—Խօֆաֆ բան , մեզա՛ . եմ կռկուցուցեր .
անանկ է նը ի՛շ միւճիպով զիս ֆէօս զրկեցին :

—Որովհետեւ այսօր Ապլ իլին մէկն է :

Այս յայտարարութեան պատճառած ապ-
շութենէն Մելիքոն աղային բերանը բաց կը
մնայ , և առանց մնաք բարովի կը մեկնի սեղանա-
ւորին քովէն , սա խորհրդածութիւնը ընելով
ինքն իրեն :

—Եւ . . . մեզի տուպառա՛ . . . իրեք սաթ
քօշէկի պէն առգիս անդին վաղցնել ու խաղ-
ցնել , հէ՛ . . .

Բոժոժիկ . —Հոգ չէ՛ , Մելիքոն աղա , դուք
որ տարին տաններկու ամիս ան առ կը խաղցու-
նէք հոգինին վառելով , հետերնիդ էլլէնմիշ ըլ-
լալու համար երկու ժամ ձեզ խաղցնելին նը-
շանակութիւն անգամ չունենար : Ասոր գուք ալ
կը վկայէք եւա՛ :



ԲԱՑ ՆԱՄԱԿ

Թէև Տպրիչը Պուկարիոյ պղտիկ քաղաք-
ներէն մէկն է , ուր նկարչութեամբ և լուսանը-
կարչութեամբ կը պարապիմ . ու թէև գտնուած
միջավայրս շատ յարմար չէ յառաջդիմութեան,
բայց միշտ աշխատած եմ արհեստիս գիտական
և արուեստական ամենավերջին կատարելագոր-
ծութեանց քայլ առ քայլ հետեիլ , որուն շնորհիւ
այսօր ունիմ արուեստին վերջին կատարելութեամբ
ըօժտուած գործիքներ որոնց հետ նաև նկարչու-
թեան արուեստիս շնորհիւ կարող եմ արտադրել
ակումտաբար ամենակատարելագործեալ պատ-
կերներ , զոր մասնաւոր կերպով մշակած եմ , և
որուն մէջ նկարչութիւնը միծ գեր կը խաղայ :
Ասիկա փորձելը դժուար չէ , կընաք Ձեր մէկ լու-
սանկարը զրկել իմ հասցէիս և պիտի ստանաք
մեծագիրը յրինակին ճիշդ նման , միայն 15 ֆը-
րանքի փոխարէն , այն ալ պատկերը ստանալէ
և հաւնելէ վերջը վճարելու պարտաւոր : Իսկ ա-
նոնք որ կտաւ զրոյս իւզաների՝ բնական գոյնե-
րով պատկերներն կուզեն ունենալ , պէտք է գա-
ղափար մը տան գոյնին նկատմամբ , (երեսի ,
աչքերու , մազերու և հագուստի գոյնը) բնական
մեծութեամբ , 35 ֆր . ի փոխարէն , վերոյիշեալ
պայմաններով :

Թէև շատեր ակումտաբար պատկերներ կը
պատրաստեն , բայց ես կը վստահեցնեմ որ ոչ
մէկինը կընայ այնչափ կատարելագործուած ըլ-
լալ որչափ նկարչի մը պատրաստածները . վա-
սըն զի առանց կանոնաւոր ուղղութիւնի ոչ մէկ ակ-
ումտաբար արժէք կրնայ ունենալ :

Յարգանք

Ն. ՍԻՍԱԿԵԱՆ

Նկարիչ-Փոթոգրաֆ ՏՈՊԵՒԶ




ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (52)

ՌԻՆԵ ՏՐ ԻՕՆ ԺԷ

ՍԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

ՊԱՐԲԱՐ-ՄԱՄՈՒՆԸ



Սպասելով որ դատապարտեալը գայ, ժողովուրդը հաճոյք կզգար դիտելով կատախնաւորին կառուցումը։ Տասն ոտք բարձրութեամբ գահաւանդ մըն էր կոթընած այն բանտին ուր կը գտնուէին մարդկային գլուխներ պարունակող վանդակները։ Բայց այդ կառաւիտարին վրայ ոչ կախալան ոչ կոճկ կար։ Չուին կրելիք պատիժը անօգուտ կրնէր վանոնք։ Պատին հանգէպ ցցուած կաղնիէ հաստատախտակի մը պիտի կապուէր եւ բացարձակ անշարժութեան մատնուէր՝ յամր մահը կրկնու համար։

Դահլիճին օգնականները վերջապէս աւարտեցին իրենց մահաստուեր պատրաստութիւնները, բանտին դուռը բացուեցաւ և մարդասպանը երեւցաւ։

Երկու ոստիկաններ կը քաշէին անոր վիզէն անցուած շղթան, Չու բնաւ կորուսած չէր իր յանդգնութիւնը։ Նոյն վայրագ ժպիտը կը կծկէր միշտ իր շուրթերը։ Հաստատ քայլով յառաջացած տսենը միանգամայն իր վայրագ ակնարկը կը պտտցունէր զինք հայհու աւնողներուն վրայ։

Ռուսի անոր կը հետեւէր ուսին վրայ կրելով ծանր կողով մը, որ ծածկուած էր կարմիր կերպասով։

Անոր ելան կառաւիտարին սանդուխէն և պահ մը Չու անհետ եղաւ զինք շրջապատողներուն մէջ, բայց շուտով առանձին մնաց դահլիճին հետ, և կանգուն տեսան զայն, վիզէն քաղուկներէն ու սրունքներէն կապուած հաստատախտակին։

Դահլիճը կողովին վրայ ծռեցաւ, զոր գահաւանդին վրայ զրած էր և, առանց բանալու ձեռքը մէջը խօթելով, երկսայրի դանակ մը հանեց, որուն վրայ սա երկու բառերը գրուած էին. «Այ բաղուկ»։

Բազմութեան դառնալով այս երկու բառերը բարձրաձայն արտասանեց. յետոյ յանկարծ դատապարտեալին դառնալով, մէկ հարուածով զէնքն անոր աջ բաղուկին մէջ մխեց, զոր այսպէս տախտակին փակցուց։ Չու հազիւ սարսուց։

Ռուսի երկրորդ անգամ ծռեցաւ, երկրորդ դա-

նակ մը առաւ, բազմութեան արձակեց «Չախ ուս» բառերը, և ղէնքն տնհետ նղաւ. թշուառականին մարմնոյն այդ մասին մէջ, որ չկրցաւ զօգել ցաւի աղաղակ մը։ Ներկայք հուրրաով մը պատասխանեցին։

Տանջողը ծռեցաւ նորէն զինուեցաւ՝ միշտ ըստ բախտի, և մասվաճառին երեսը արեան կոհակով մը ծածկուեցաւ։ Անոր աչքերէն մէկուն մէջ մխրճուած էր Ռուսիին դանակը։ Լսուած էր Չուի գլխուն բախումը տախտակին դէմ։ Ետոյ կուրծքին վրայ ինկաւ զլուխը։

Այն ատեն ահարկու պայքար մը սկսաւ ցաւին ու տանջանքին, կենանքին ու մահուան միջև։ Չարչարեալը կը գալարէր՝ խուսափելու համար իւրաքանչիւր նոր հարուածէ. զինք կապող շուանները միտերուն մէջ կը մխուէին. գահաւանդը կը հեծէր անոր ճիգերուն տակ, ցաւագին ոտնուճիւղը կը թալով կը ակարանային։

Ամբոխին մէջ ալ ետեւ չէր տիրեր, ցնորք միայն։ Դահլիճն ալ խելայեղած, գինով, արիւնաթաթաւ, բառ մը չէր հաներ բերնէն։ Շարունակ զէնք կը հանէր կողովէն և կը զարնէր, միշտ կը զարնէր, թէև իր զոհը մեռած ըլլար, վասն զի անշուշտ գիտալով ճիւղին վրայ՝ հակառակ իր ոճիրներուն, Պաւտա ուզած էր որ վեցերորդ դաշոյնին կոթին վրայ սա բառը գրուի. «Սիրտ»։

Բայց օրէնքը, որ ալ գոյութիւն չունի, և որով ծովահեններն ու ապստամբները միայն դատելի էին երբեմն, կ'ուզէր որ քսան դանակներուն ամենքն ալ գործածուին յաջորդաբար։

Եւ ժողովուրդը կը ծափահարէր դարիճը որ գիտէր իր վրայ կը մղեցներ։ Անշուշտ Ռուսի վեր առաւ կողովը՝ ամենուն ցուցունելու համար թէ պարագ էր, և ամբողջ վերջին հուրրա մը տրձակեց։

Յամր մահուան ահաւիտ տրամը վերջացած էր։

Նոյն ժամուն, Գուն—Սիի փոքր բաղաբը բոլորովին տարբեր տեսարանի մը թատերափայլն էր։

Սոլ—Պրոտէին անմեղութեան լուրը, անմեղութիւն որուն ամեն մարդ համոզուած էր միշտ, և Չուի դատապարտութեան լուրը անսահման ուրախութիւն պատճառած էին հոն։

Բոլոր ժողովուրդը ընդ առաջ ելած էր տիկին Լիւուի և անոր աղջկանը, զորս Մէնկ ուզած էր անձամբ տանիլ իր դրօշաղարդ կօնտուան։

Երբ երկու կիները ցամաք ելան, հազարաւոր զուարթ ու զապկնեղ ընդունեցին զանոնք, և ստիպուեցան անցնիլ տեղեւորարդ կամարներու տակէ, որոցմով պըճնուած էր Պաթէօն—տ'Օմ փողոցը, ի պատիւ իրենց։

Խոշոր մանտարէնը թեւն առած էր տիկին Լիւն, Ի—Թէ իր զարմուհիին բազուկը կը սկսէր սրտին վըրայ: Երիտասարդ գրագէտը բոլորովին բժշկուած էր իր վերքերէն: Սոլ—Պրօտէ արգէն կը սկսէր վերստանալ իր երբեմնի թարմութիւնն ու գեղեցկութիւնը: Բերքինս և Արթուր անոնց կը հետեւին:

Թափօրը շուտով հասաւ այն փոքր տունը ուր Երեք ամիս առաջ այնքան անգթօրէն մտած էր դժբաղտութիւնը. և այն պահուն երբ Մէնկ յարգանք կը խոնարհէր տիկին Լիւնի առջև՝ հրաժեշտ առնելու համար, սա զարմացման աղաղակ մը արձակեց:

Չուի տունն անհետ եղած էր. Անոր գետինը քանի մը օր առաջ փոխուած էր հիշատակին պարտէզի մը, որուն մէջտեղը կը բարձրանար գեղեցիկ տաղաւար մը: Եղեւնադատ ատենին հարուստ նախագահ էր որ ստակի ուժով այդ հրաշքը ձեռք բերած էր Չինացի պարտիզպաններէն:

—Տիկին, ըստ Սոլ—Պրօտէի մօքը, ուղեցի որ բան մը չկարենայ ձեր սիրուն աղջկանը յիշեցունել անցեալը: Կը խնդրեմ որ արտօնէք զինքն այս յիշատակն ընդունելու, իրրեւ արտայայտութիւն իմ զիջելուս և իրրեւ հարսանեկան նուէր:

Դատաւորին այս ընթացքէն սաստիկ յուզուած և իր յարախօսութեանը մէջ մոռնալով այդ մարդուն իրեն պատճառած բոլոր տառապանքները, տիկին Լիւն հազիւ կրցաւ բանի մը երախտագիտական բառ ըսել:

Խոշոր դատաւորը, քիչ մը ինքն ալ իր դերէն չըփօթած, օգուտ քաղեց տիկնոջ վարանումներէն՝ վերջին անգամ մըն ալ զայն ողջունելու համար. և դարձաւ իր Բերքինս բարեկամին որ ձեռքերն անոր կարկառեց ըսելով.

—Հատ լաւ ըրիք, Մէնկ Յիրօւի շատ աղնիւ սիրտ ունիք:

—Է՛հ, սիրելի նաւագետ, պատասխանեց մանտարէնը համեստօրէն. ձեռքէս հեղածը կընեմ ձեզի նմանելու համար: Բայց միկնինք, այս յուզումները կը խռովեն զիս: Բարեբախտաբար նախատեսած էի տիկնայ Խոհարարս պատուական ճաշ մըն է պատրաստած ինծի համար, որուն կառաջարկեմ որ մասնակցիք: Կը յուսամ թէ ձեռք բարեկամն ալ պատիւ պիտի ընէ հրուէնս ընդունելու:

Սըր Արթուր խոնարհեցաւ ժպտելով: Մէնկ, յոյժ օրտաշարժ լքուածով մը իր թիւը տուաւ մաքսախոյսին, և իր կոնտուան շատ չանցած Հօնոն կղզին ուղղուեցաւ: Ժամ մը հալը մինչ զահիճը կառաքինատէն կը վեր-

ցունէր Չուի յօշոտուած մարմինը, Սոլ—Պրօտէ և Ի—Թէ իրենց մօտալուստ ամուսնութեան թուականը կ'որոշէին, և հեշտաւէր դատարանը, իր կոշտականներուն հետ նստելով փառաւոր սեղանի մը առջև, յուզեալ ձայնով կըսէր անոնց.

—Քիչ մնայ որ կեանքս վրայ երթար, սիրելի բարեկամներս: Եթէ զուր չըլլալիք, այս պահուս փոխանակ ամենիւ Չինաստանի հաշտութիւնն Անգլիոյ հետ, գուցէ պատգուի հարկը հարուած պիտի ընդունէի:

Այս եղաւ վախճանը Մէնկ նախագահին դատական սխալին. բայց այս պատմութեան մինչեւ վերջը պահելու համար իր տեղական գոյնը զոր ջանացի տալ իրեն, մտաբերելով իմ ուղեւորական տպաւորութիւններս, կուզեմ վերջացնել զայն սա փիլիսոփայական խոր հրաժեշտութեամբ զոր կարգացի ձեռագրին տակ Թէն—Թուն—Լունկ գրագէտին որ Մարգարիտէն Գեօրջի նիւթը հայթայթեց ինծի:

«Ի՛նչ գողտիւքով ջուրի կամիլ մը որ սահմանուած է ծաղիկներ փթթեցնելու, ընդ հակառակին արեան կոհակներ վաղցունել կուտայ:

«Չարաբախտութիւն:

ՎԵՐ 2

ԱՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՓ

ՊԻՆ, ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻԼԵՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւլտիւրիւճիւ Գորաւոր վէ Հիքիայէլէր. Մարիւմաթը Գէննիյէ. Լուրաթը Լէթայիֆ. Գէննի Էյլէնճէլէր վէ Բէսիմի Պիլէճէլէր:

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյ նէշը օլունտն մէզքիւր քիթապըն պիլինճի ճիլաի խիթամ պուլուպ, խտարէխանէմիլլուէ աթթըլմուպտա արը Թիյ 2 ֆրանք:

— 0 —

—Հրատարակուեցաւ ԲՆՆԱՍԻՐ օգտաշատ հանդէսի Մարտի պրակը:

Տարեկանն է 15 ֆր. Հասցէն է

ՊԱՍՏԱՆԻՆ

112 Պուլֆար Ռօշրշուա Բարիկ

Печатница "Взаимность" — Варна